



1843-1895 ՀԱՏՈՐ ԵԳ. ՅՈՒԼԻՍ

### Հ Ի Ն Հ Ա Ի Ա Տ Ք Հ Ա Յ Ո Ց

ՊԼ. Ժ. - ՄՈԳՈՒԹԻՒՆ. - ՄԱՐԿԵՉԱՆՆ ՍՂԱՆԴ

(Տես յ'էջ 241)

**Մ**ՐԱԿԻ պաշտաման հանդիսական ժամերն՝ օրուան հինգ պահերն «էին, ըստ Պարօից կեան, իսկ կրակի Պապուազոյն նուէրն էր Հումա; ըստ Հընդ-կաց Սոնա, որ ըստ ոմանց է Համհամ կամ Համիմ ըսուած բոյսն, Anomum ըստ Հատինաց, որ որթոյ նման անուշահոտ ողկոյզներ բերէ և անոր հիւթն. այս հիւթէն զանգած կոտորներ ձգեն կրակի մէջ. ըստ բուսաբանից՝ յատուկ Sarcostema viminialis կ'ըսուի բոյսն. — կենդանեաց զոհ չէր ըլլար կրակի, բայց հարկ էր ամեն աւտելի կենդանի այլ նախ նուիրել անոր, իբրև սրբելու համար, և յետոյ մարթել և աւտել. այս է յագիչ ըսուածն (ի գիրս Եղիշէի), և պատուիրուածն, « Պատրուակք մի » մեռցին անցազ, եթէ յոգեաց իցէ և եթէ » յայծեաց և եթէ յարջառոց, և եթէ ի

» հաւուց և եթէ ի խոզաց »: Յագեալ և նուիրեալ միսն կոչուէր Միչարտա (Միւրտ?)։ Մէկ ստորական նուէր մ'այլ էր բազարջ հացի մանր նկանակ, զոր Տարոնն կամ Տարանոնոյ կոչէին: Վերոյիշեալ Ս. Աստուածաբոյ (Յիզախիբուզոի) վկայաբանութեան մէջ՝ յիշուի և զոնս աղտեզ մատուցանել կրակի, որ չեմ գիտեր ի՞նչ նշանակէ: — Զոհելն և աղօթելն միանգամայն ըստ մազկեզանց կոչուէր Եագ և յագել:

Բաւական համարինք այսչափս Զրադեշտի և մոզուց կրօնից ծանօթութեան, որք զեռշատ և շատ աւանդութիւններ և վարդապետութիւններ ունէին, իբարմէ տարբեր և աւտելի կամ պակաս. մեր Եղիշէ վ. կ'ըսէ իբատեն, Ե դարուն, « Հինգ կեշտք են՝ որ զբանեալ ունին զամենայն օրէնս մոզութեան » և են, նախ, հասարակաց Զրադեշտական կրօն.

քրն. յետոյ, Ամպարաքան, Բողպայտն, Պաշխանիկն և Պարսկադեմն (1). յայտ է որ յետինքս նորագոյն ժամանակաց ազանդէ էին, մէկն Պարթեւաց, միւսն Սասանեանց տէրութեան ատեն ընպունուած. որոց զանազանութիւնն և յաւելուածն շատ ծանօթ չեն մեզ և ոչ հարկաւոր մեր նպատակին: Կ'աւելցընէ Եղիշէ, թէ այս հինգէն զատ « Է » միւս եւս այլ վեցերորդ, զոր Պետունգն » (կամ Մոզպետն) կոչեն ». և ուլ որ այս ամեն ազանպոց կամ մասանց հաւատոյ հմուտ ըլլար՝ Համակդեմ կոչուէր, իբր ամենահաւատ: Այսպիսի էր այն մոզպետն՝ որոյ յանձնուեցան Ս. Ղեւտդեանք՝ ի բանտ և ի փորձ, և որոց շնորհքով ինքն ընդունեցաւ զքրիստոնէութիւն և եղաւ կատարեալ հաւատասցող և պսակակից Մրբոցն, անոնցմէ առաջ: — Յայտնի է բառէն որ մոզոց զըլխաւոր նշանակէ Մոզպետն և Մոզպետ. ի հինգերորդ զարու՝ կը համոնպատասխանէր մեր եպիսկոպոսին, բայց հետզհետէ այդ անուան կարեւորութիւնն պակսելով՝ այժմ նշանակէ քահանայ, որում նոյն զարուն կ'ըսուէր՝ մոզ: Դիտելի է որ Աւեսդայի մէջ քահանայի կ'ըսուի Արարվան, և ոչ երբեք մոզ. այս զորոց մէջ վարդապետի կ'ըսուի Արարարաիդի, յորմէ կրճատուելով ձևացաւ Հէրպատ, վարպետ. այժմ Հէրպատը՝ քահանայէն մովպետէն ստորին դասակարգ մի կը կազմեն: Գերագոյն մոզպետն կոչուի Տեսդարի տեսդարան, որ ըստ բառին նշանակէ հզօր ձեռքով (ձեռներէց). յորմէ թուի և մեր դաստիարակ բառն. յեղիշեայ զարուն կ'ըսուէր՝ Մոզպետաց մոզպետ, ինչպէս ի գիրս մեր նախնեաց գրուի Մովպետան մովպետ. այս կոչման հետ Եղիշեայ զորոց մէջ կայ գրուած և Ռատ, զոր ոմանք յատուկ անուն մարդոյ կարծեր են, բայց նշանակէ տէր, գիտուն, և մեծ: — Մոզոց զգետն պարզ սպիտակ պատմուճան է, որ սագրա կոչուի, մէջքերնին զօտի (քոստի) շորս հանդուցով, ի զըլուինին հայկական կամ փոխզական խոյր կամ զգակ՝ երկայն սկանջներով կամ փե-

շերով, բերաննին անով ծածկելու համար. մոզպետաց խոյրն աւելի շիտակ է. իսկ ի ձեռուրնին բռնածը արդէն վերը յիշուեցաւ, Ռան և Բարսանեք:

Հարեւանցի խօսք մ'այլ ըսենք մոզոց կարծեաց՝ մարդկան և արարչութեան վրայօք, որ զուցէ մեր հին Հայոց այլ երբեմն ընդունելի եղած ըլլայ, թէ և շատ արտառոց: Յետ Ամպարանոց և յառաջ քան զայլ աւեն արարած՝ եղած է կամ Որմիզ ստեղծած է ցուլ մի, Ապուտատ կոչուած. զոր նախանձողն Ահրմէն կու սպաննէ. բայց Որմիզ անոր հրթիւն զոյացընէ զբոյս և զկենդանիս, նա և զառաջին մարդն՝ անուանեալ Քեշուսուրդա կամ Քեշուսուրդա ܩܫܘܪܬܐ, զսա այլ կու սպաննէ շարն. իսկ Որմիզ անկէց այլ կու հանէ այր և կին մի, Միշխա և Միշխանա, իբրև Ալամ և Եւա, որք կ'ըլլան նախանձողք մարդկութեան: Այսպիսի ծագման պատճառաւ մեծ պատիւ մ'ունի ցուլն առ մոզ, մանաւանդ սպիտակն, որպէս և առ Հայս. զոր յայտնեն Տրգատայ և իր հօր Խոսրովու ըբած զոհքն և նուէրքն առ շատուածս իւրեանց. և այս նախաստեղծ ցուլ կենդանոյ աւանդութեամբ թուի գիտնոց՝ թէ Նինուէի նորագիւտ աւերակաց մէջ գտուած մեծամեծ քարեղէն Յուլ-ապիւծ և մարդ-միացեալ արձանքն կանգնած են արքունեաց դրանց և պարսպաց քով:

Մարզու վախճանին աւելի ուղղամիտ կարծիք ունէին մոզք, ընդունելով հանգերձեալ կենանք մի, բարիներու արքայութիւն և շարաց գծիք, որ կոչուի Տոզախ. երկուքին միջոցն կամուրջ մի կայ Չիկեկատ կոչուած, ուսկից պէտք է անցնին յարքայութիւն գնացողք. և որպէս զի Ահրմէն անոնց վրայ յարձակի՝ հօն պահապան կենայ՝ մեծ և ահաւոր շուն մի, Յախակ-կոսաշ անուն, (թերեւ ըստ հայ բառի ցուկ, շան պունջը նշանակելով), Արքայութիւնն կոչուի Ահու-վահիսդա, այսինքն Ազնիւ բնակարան. բայց երեք կարգ կամ աստիճան է, իբր երկինք երկինց. առաջինն՝ Համախտան-պիհիշդ՝ երկուս ինչուան աստղերը բարձրանայ. երկրորդն՝ Մահ-րիա-պիհիշդ՝ յատեղաց մինչև յարեգակն. երրորդն նարո-տմանա՝ տուն երգոց,

1. Ասոնց վրայք հմտական գրուած մի հրատարակուած է ի Բաղմամպի տարւոյս էջ 51:

պահլաներէն, նոր պարսկերէն՝ ֆարսագան: Քուն արքայարանն է բնակարան Ումըզդի, որ բազմի ի վեհեհրէմ զահայո՝ ի ծայր սրբազան բարձր Հարս—պրեհգայիցի լերին, յորմէ հիմայ ծածօթ անուն կողկասեան և պարսկական էլլարդ լերանց: Պէյմէն հրեշտակապետն կ'առաջնորդէ արդարոց հողոց և անվտանգ հասցնէ յարջայութիւն. ընդ հակառակն, մեղաւորք տատանելով կամըրջին վրայ՝ զլորին ի վայր, ի դոխս. իսկ միջակ հողիք, այսինքն որոց բարիքն և շարիքն հաւատար լլայն, վերայգրեալ Համստան—պէհրչի կայանքում մեան: Մեռելոց հողոց համար անմահութեամբ են աղօթք և չափ աղօթից, և աղաչանք առ Գահանան հոգեհան հրեշտակն, որոց անտամբ կոչուին և աղօթքն ննկեցելոց. իսկ հասարակ աղօթքն՝ Աֆրիկն, զովութիւնք՝ Նեայիշ: Մեծամեծ մեղքն Գահաֆոռ կոչուին. մեղաց քառութեան համար զլիաւոր ապաշխարանք է՝ ֆաստկար ճնիներ և զեռուններ սպաննել ջնջել: — Աշխարհի վերջն պիտի ըլլայ երրորդ հազարամեայ զարուն ետքը, այսինքն Չրադելտէն 3000 տարի ետեւ. երբ պիտի երեւնան Հոշտերպամի և Հոշտերմահի (իրբ Ենուրք և Եզիա) հրաշագործք, մարդկան բարի վարք քարոզելու. անոնցմէ վերջ պիտի գայ ի Գահանէ (Գանձակ?) իրան երկրի՝ Սերխոշ, քաջ հետեւող Չրադելտի, և յաղթելով Ահմէտի՝ Գ. դարն պիտի սկսի յարութեամբ մեծելոց: Ի՞նչպէս պիտի ըլլայ յարութիւնն՝ Յրաշաքարի (Հրաշակերտ?), հարցեր է ինքն Չրադելտ առ Ումըզդ, և սա պատասխաներ. Ինչպէս ցորենի հատն որ ընկնի ի հող՝ կու բուսնի և կ'անի, այսպէս երկիրս այլ նորոգեամ՝ պիտի դուր բերէ ոսկորները, աբիւնը և կեանքը, ինչպէս որ էին առաջ: Սէրհիշ պիտի դատէ զմարդիկ. անմաքուրները համառօտ բայց սաստիկ կեզպով մի պիտի մարքէ քաւէ: մեծ մեղաւորները պիտի դատապարտէ, որք Գարդաստ կամ Գարվանտ կոչուին. յետ բաժանման արդարոց և մեղաւորաց՝ մեծ լացով և կծով, երեք օր և երեք գիշեր անաւոր հրեհն պիտի ըլլայ, որ քարեր և մետաղներն այլ հալեցնէ, մեղաւորներն և դեւերն այլ մէկտեղ: Յետ այն

օրերուն՝ երկիր մարքուած նորոգուած պիտի երեւնայ. մարուր մարդիկ այլ պայծառացեալ պիտի ապրին՝ կերակուրի կարօտ չըլլալով՝ 3000 տարի, միայն կենսատու Հով ծառայն հիւթը խմելով, կամ Հետեաւէշ ցոյն բրդխաւը. յետ այդքան տարիներու՝ պիտի լրանայ աշխարհիս 10, 000 ամեայ ժամանակն: Յետ այնորիկ ի՞նչ պիտի ըլլայ — կարծեմ Մոզերն այլ հիմայ շեն դիտեր. բայց, թէև պոմպոս հին յոյն հեղինակն՝ որ մանրամասն գրեր էր Չրադելտի վարքն և վարդապետութիւնը (հիմայ կորուած, բայց Պլուտարքոսէն քիչ մի ծանուցուած), կ'ըսէ, թէ դարձեալ 2 կամ 12000 տարի պիտի հանգչին Ումըզդի հետ. և յետոյ թուի թէ նորէն պիտի նորոգուի աշխարհ և ժամանակի շրջանն. այսպէս կորսաւելով մոզուց կարճատևութեան յաւիտեանականութիւնը:

Այսպիսի խառն ի խառն հաւատք ունէին և մեր հին Հայք. — հաւանական է լիէ ունէին, թէ և ոչ ամենայն Հայք. Բ. Արտաշէս նորոգող կամ յորդորող դիւական պաշտամանց՝ ունէր ընտանի մի (ըստ Խորեն. Բ. ԽԸ), « աշակերտ մոզի ուրումն երազա » հանի (1), որ յայն սակս Մոզպաշտէ անուն « կարգային ». զսա փոխանակ Երուսաղայ եղբոր Երուսանայ՝ քրմապետ կարգեց. ասէ զուշակուի մոզուց աղանդոյն ընդունուած ըլլալն ի Հայս. Մոզպաշտէ (2) բառն այլ գուշակուի Մոզուց վարդապետութեան հետեւող, և է պարսկերէն այլ 𐎠𐎡𐎢𐎣. վկայէ և պատմութիւնն, ինչպէս առաջ յիշեցինք, որ երբ Առաջիոր Սասանեան նուաճեց զՀայս, ոչ իբրև նոր կիօքն մտուց զիրակապաշտութիւն, այլ « զՀուրն Ումըզդական որ ի վերայ բազ » նին որ ի Բագաւան՝ անշէլ հրամայէ լու » ցանել: և բայց, թուի թէ երբ Տրդատ յաղթողաբար դարձաւ ի Հայս, Պարսից հետ

1. Բաց յայլեւայլ աղթարական բանից՝ կ'ըսուի թէ Չրադելտի գրոց եօթն մասունքն (Նոսա 2.) երազական բանք էին:  
 2. Թուի թէ յունարէն Մեզարիս գրուած անունն այլ զայս նշանակէ. վասն զի իրենց Եփեսոսի Արտեմիս մեհենին ներքինի ճուրմերն այլ այսպէս կոչուէին: (Մորի. Գ. 157):

վաճնոց անոնց պաշտամունքն այլ, զոնէ իր սեփական արքունեաց սահմաններէն. վասն զի իր հրովարտական մէջ (համարելով վաւերական), ոչ կրակի յիշատակ կայ և ոչ լուսաւորաց պաշտաման :

**ԳԼՈՒԽ ԺԱ.**

**ՀՄԱՅՔ. — ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ, ՀԱՐՑՈՒԿՔ, ԿԱԽԱՐԻԱՆՔ**

Ինչ հաւատք որ օտար է ի կրօնից հին և նոր օրինաց՝ մտար և սուտ է, ինչպէս տեսանք ինչուան հիմայ յիշած տեսակ տեսակ հաւատացեալ և պաշտեցեալ առարկաներէն. որք քիչ կամ շատ սկզբնական աստուածածանօթութեան գաղափարին խառնակելէն և աւրուելէն առաջ եկած էին. և եթէ այդ ծագմանէն յառաջ գալն, և պաշտելեաց երեւելի է ահաւոր կերպարանքն՝ կրնային մարութեան պատրուակ մ'ըլլալ պաշտողացն և խարուելու դիւրութիւն մի, սակայն նոյն իսկ կերպարանքն ըստ մեծ մասին յայտ յանդիման թանձր նիւթեր ըլլալով, շատ այլ կու մեծցընեն մարդկան մարութիւնը. Քայց ինչ աւելի մեծ կ'երեւի մարութիւնն՝ չնչին բանից մէջ, որ շատ հեղ իսկական բանէ մ'այլ ծագում չունին, այլ սոսկ երեւակայութիւն, կարծիք և ստութիւն են. կամ երեւած և պատահած բանէ մի՛ ուրիշ բան մի հետեւցընել մտօք կամ կամօք, այլ ոչ իրօք. զի չկայ ստոյգ ինչ որ իր ըսուի, այլ շատ շատ երեւոյթ մի՛ և այն խաբէական: Այսպիսի մտաւոր և կամաւոր կամ գործնական մարութիւնք, կամ խարուելով կամ խարելով, մեր ինչուան հիմայ յիշած դից, ոգեաց, պաշտելեաց և հաւատալեաց շատութենէն՝ աւելի այլ շատ են, և ընդհանուր, այսինքն ամեն երկիր և ամեն ազգաց մէջ գտուած, և դժբաղդարար և մեծ ամօթով՝ ըսեմք, նաեւ քրիստոնեայ ազգաց կամ անձանց մէջ՝ մինչեւ հիմայ, աւելի կամ պակաս, մէկ կամ մէկայլ կերպով մնացած և շարունակուած:

Այս տեսակ տեսակ կարծելիքն և հաւա-

տալիք, որ երեւելի առարկայ մի չունին, իրարմէ զանազանելն անկարելի կամ դժար է, մէկ բառով Հմայք և Հմայութիւն կ'ուզեմք անուանել, իրեւ ընդարձակ և շատ տեսակ բովանդակող. զորս եթէ ջանամք քանի մի կամ հանրական ցեղի վերածել և բացատրել, ըսենք կախարդութիւն, Գոշաւորութիւն և Հարցոյ, թէ և չեմք համոզուած թէ յաշողիմք այսպիսի բաժանմամբ. եւս առաւել, թէ կարենամք յիշել զոնէ մեր ազգի և լեզուի մէջ ծանօթ՝ լսուած տեսակները և բոլոր անունները. և շատ սոգոր՝ չեմք չգիտցածներու կամ չբաժնեցուս վրայ. վասն զի ոչ միայն ստութիւնք են, այլ եւ ուսմիկ և երբեմն չար խելագարութիւն, խելացնորութիւն, խելացնգութիւն. զրելս իսկ անհանոյ և ցաւալի՛ այնու՛ զի այսպիսի աղճատանք և ստութիւնք՝ ոչ որպէս զիք և կուրք յօտարաց մտեր են ի Հայս, այլ շատն իրենցմէ հնարած (ինչպէս ուրիշ ազգեր այլ իրենք իրենց), և յօտարաց այլ վկայուած են Հայկական հմայք, (ինչպէս պիտի յիշեմք յետոյ). և որ չարագոյն է՝ մեծ ետանդեամբ կամ յամառութեամբ պահուած, թէ և շատ Հարք և վարդապետք մեր հակառակած և մեղադրած են, սկսեալ ի լուսաւորչէ, յերջնրկայ, ի Խորենացոյ և ի Մանգակունոյ, որ վշտացեալ զրէր, « Ոչ դիւական հմայիցն են » պատժողք և ոչ Յուսարացն պահանջողք ». և եթէ ինքն և իրմէ վեղչն շատերն այլ պատմեր և խրատեր են, այլ ոչ է ջնջուած. և աւելի ցաւելի է ըսելն՝ թէ անջնջելի այլ երեւի. բայց և ըստ Յիսուսին մերոյ՝ « Այս » ազգ (չարի) ոչ իւրիք ելանէ, եթէ ոչ պահօք » և աղօթիւք »:

Արդ, ըսենք նախ, Հմայութեան անուամբ ինչ կ'իմանամք՝ ընդհանրապէս և մասնաւոր: Ընդհանրապէս՝ ըստ նախագրելոյս՝ ամենայն սուտ հաւատալի բան որ պարզ հետեւցընելով մի ըլլայ տեսնուած կամ չտեսնուած բանէ, դիպուածէ, երազէ, ձեւէ, շարուածքէ կամ գրուածքէ, կամ խօսքով, կամ զրով, կամ տեսակ տեսակ նիւթերով, զեղերով, կենդանիներով, շարժմամբք, շօշափմամբ, և այլն: իսկ ի մասնաւորի՝ Հմայք կամ Հմայութիւն բառի յատուկ նշանակու-

թիւնն է, սնտոի ջանք և գործք իբր կրօնական սկզբամբ բան մի գիտնալու, մանաւանդ շատերու զգիտցածը, և ըստ այսմ՝ գիտցողն քան զայլս կ'ըլլայ գեո և հմուտ, և այս բանին արմատն կրնայ Հմայութեան այլ արմատ ըլլալ ըստ մեր լեզուի, և հմայքն գործ հրմտի։ Օտարաց մէջ այլ փնտոելով նման անուն, նախ Չանդիկ Հունայն յիշուի, և այնոր հետ պարսիկ Հունն, որ իրենց մարգարէ մի համարուէր ճէմէիտ թագաւորին անունն, և մեղութեան վարդապետութիւններ գրեց։ Չանդիկ և Հնդկաց Հոմայի և Մոմայի մերձակոր անուամբ Պուտհեանք այլ Մայս կոչեն Հրապոյրք ըստածն առ մեզ, որ մարդութեան շարժառիթ է ։ — Հայոց հին հմայութեան կամ հմայասիրութեան վկայութիւն է՝ մէկ տեսակին (յետոյ յիշելի) լատին քերականին (Յոբնաղ, Երզիծ. 9, 550) անուանելն, *Armenius vel Comagenus Aruspex*։ — Բարբաժան աղանակոր ի սկիզբն Գ դարու (ըստ Խորեն. Բ. 49.) գալով ի Հայս, քննեց ասոնց մեհնական պատմութիւնները և պաշտամունքը, և « արար բան զում ասացուածն ընդդէմ Բաշիսից և կոց պաշտաման՝ որ յաշխարհս մերում »։ Ս. Սեղբեստրոսի և Կոստանդիանոսի լիճարանեայ պատմութեան մէջ՝ յիշուի, որ կայսրն յառաջ քան զհաստալն ի Քրիստոս, իր հիւանդութեան ճար ուզելով՝ խնդրեց և ի Տրդատայ՝ իբրեւ ի մերձակորէ՝ որ իրեն Գիւթեր խաւրէ ի կողմանց Պարսից և Հնդկաց, որք թերեւ գտուէին և ի Հայս. թէպէտ այս պատմութիւն շատ երկբայական է ։ — Յովհան Մանդակունի իր ժամանակի և առաջնոց հրմայութեանց զէմ՝ գրելով (ԻԶ ճատ), յիշէ այս տեսակները. Գիւտարքիւն. Թովուարքիւն. Հատահարցոտքիւն. Հասահայրոտքիւն. Մադարսիտքիւն. Քոտահարցոտքիւն. Հեղահարոտքիւն. Հմայոտքիւն. Միւզագիտոտքիւն. Գրարարոտքիւն. Աստեղագիտոտքիւն. Գիւտահարցոտքիւն. Օրահմայք. Լուսնախոտք. Շեղախոտք. Ոգոտեանմայք. Գետահմայք. Սենիկունք. Յուտոտք. Բախտ. Ծահատագիր. Գիր Պահարակի. Շարժմակք բժժանաց. որոց վրայ կ'ըրնան աւելցուիլ այլ և այլ հմայութիւններ ուրիշներէ յիշուած ։

Վանական վ. հեթանոսութեան և Հմայից ծագման վրայ խօսելով, համարի, թէ « Թառ » տուրս Աբրահամու՝ Գիւտարքիւնք գտան. « Գաղղէացիքն Աստղագիտոտքեանք առ » նէին, և Մորքն՝ Չեհնակունք, և այլք Վրն. « կաս՝ զվեռեայնս անելով . փոխագացիք՝ » Լեդդահմայոտքեանք՝ զորքոտանեաց շրջանունն, զճայն թռչնոց, զվայտի և զքար » ըի ։ Ետի Եհնուէ սկսաւ զԿախարդոտքիւն, վասն որոյ ասէ (Ս. Գրեք) Եհնուէ՝ « զուկս կախարդաց ։ Ոմանք արմատուք առ » նեն զԿախարդութիւնն. անանս թաղելով « ի հող, և երեք կենդանույ ձայն տան » ածել, ձկան, թռչնոյ և մարդոյ ։

Ա. Ասոնց կարգին՝ հասարակօրէն լսուած Կախարդութիւնը չի յիշեր Մանդակունին, զի իբրեւ ընդհանուր անուն համարի. մօլորութեանց, կամ Հմայութեան անուամբ զնոյն իմանայ, նոյնպէս և Գիւտարքեանք, զոր անուն տեսակէ առաջ գրեք է. և հիմայ այլ այս երեք անուանք աւելի ընդհանրական և համանիշ համարուին ։ Կախարդ բառին ստուգաբանութիւնն անյայտ է ինձ. և հարկ է որ յատուկ բան մի նշանակած ըլլայ ի սկզբան, տարբեր միւս երկու անուններէն ։ Ս. գրոց թարգմանութեան մէջ միշտ յոյն բնագրի բառին՝ նոյն հայ բառն չի փոխանակեր, և աւելի աչք խաբող, անպարար մի ցուցնող համարուի. Մեր ոչ շատ հին վարդապետաց մէկն գրէ. « Կախարդն՝ որ անօթ ինչ թաղէ » ի հող, կասս կամ մո՛ւ կամ Երկար. և պէս » պէս բժժանօք յարմարեն զարուեստն » . նոյն բան քիչ մի տարբեր գրուած է. « Կախարդք » ասեն՝ որ անօթս թաղեն ի գերմնի, բրժ. « Ժանօք ինչ պէսպէս ըստ արուեստին » . իսկ թովմաս Մեծօփեցի, « Կախարդք՝ որ » յարմատս ծառոց և ի մայնս քաշնոց զիւ » թէին » ։ — Կախարդն իր արուեստով կամ գործիքներն այլ մէկտեղ իմանալով՝ կախարդասար կ'ըսուի, գործն այլ՝ կախարդանք, կախարդոտքիւն. յիշուի և Կախարդանոց, զոր տուն ուրացութեան կ'անուանէ վարդան վ. ի խրատուն. ուրիշ խրատիչ մի յիշէ Կախարդամարտ Դեղատոտքիւն. Յովհաննէս Մամիկոնեան՝ իբր նախատական խօսք մի կ'ըսէ « Կախարդատարք գուք » ։

Հմայից համար այլ գրէ մէկն. « Հմայն՝  
 » որ ի տես աչաց կամ զձայնն հմայէ, զԹը-  
 » սիչս և զկոխէ հատց, կամ զձայն կրակի  
 » և զսաձատաց և զդրան, կամ աքիստ տե-  
 » սեալ, կամ բեձ կամ մոռնակ, և այլ ինչ  
 » այսպիսի » : Այսպէս հմայութեան անունն  
 անելի ընդհանուր ըլլալով՝ այլեայլ կերպերն  
 բացատրուին հետը կցած բառերով. ինչպէս,  
 Լերդահմայոչիւն, որ է մորթուած կամ  
 գոհուած կենդանեաց լերդը և շարժունքը  
 զնրնել, և ըստ այնմ զուշակութիւններ ընել-  
 այս Լերդահմայն է Լուսինաց և իրենց վե-  
 րայիշեալ քերդողին Aruspex կամ Haru-  
 spex կոչած՝ Հայ և Կոմագենացի հմայողն.  
 նոյնն ուրիշ տեղ այլ կ'իմացնէ Հայոց այս  
 ալանդակ հմայութիւնը, անմեղուկ Աղաւանաց  
 հետ ազտեղի Ծանց աղիքները քննենին :  
 Սալուստիոս այլ իր հատուկտիր պատմու-  
 թեանց մէջ յիշած է աշխարհակալ Տիգրանի  
 հարցընելն կամ փորձելն, նախ զԵրագա-  
 գետս, յետոյ զԼերդահմայս և վերջը զՀա-  
 ճահմայս : Այս ետքի տեսակն այնքան յա-  
 ճախեալ էր առ Հռովմայեցիս, որ հաւամայ  
 կոչուեալ, Augures (բառին սկիզբն նոյն է  
 հաս թախս), որ ինչուան հիմայ առ արեւ-  
 մտտեայս՝ քարի մաղթանաց տեղ գործածուի,  
 (Փո. Augure, augurer). հմայողաց տեղն  
 այլ կոչէին Auguraculum. Եթէ բառէն և  
 եթէ բարութիւններէն զուշակուի որ Լե-  
 դահմայութեան պէս՝ Հայոց այլ սովորական  
 էր, և այս, որ Հառահարցոչութիւն այլ կ'ը-  
 սուի, յայտնելով որ ոչ միայն աղիքնի քըն-  
 նելով կ'ըլլար, այլ և քսիչքն և կոհիչքն, այս-  
 ինքն ձայները, որով կորուին և Հառակոհիչ :  
 Այս անուամբ յիշէ վարդապետ մի (ի ճառի  
 Ծաղկազարդի) ուրիշ տեսակ հմայողաց հետ,  
 իրմէ հին Դաւիթ վ. Ալակայ որդին այլ  
 (ԺՅ դարու) ուրիշ շատ տեսակ հմայից հետ.  
 իր ժամանակակից ազգակցաց համար. կ'ըսէ  
 « Առ երեկս՝ թէ հաւ խօսի՝ հմայեն. և ի  
 » Մարեաց թէ ամէ ձայն աքաղաղի՝ հա-  
 » անեն զզուխն » : Ետրուսը (որոց յա-  
 բեւելից և ըստ ոմանց ի Հայոց ծագումն յի-  
 շած ենք) մտուցին այս հմայութիւնս առ Լա-  
 տինս. իսկ առաջին գտողն՝ շատ անյարմար՝  
 զՅաբեթի համարի վարդան պատմիչ, ուրիշ

հետեւելով : — Լերդահմայութեան համար  
 այլ կ'ըսէ Նոննոս (ինչպէս յիշած ենք և  
 զայս) « Մողբն ի Գամրաց են (որ է Ա.  
 Հայք), ուստի և Լերդահմայութիւնն լինի ».  
 Տատիանոս հնազոյն զրիչ այլ՝ Փոիւզացոց  
 ազգակցաց Հայոց՝ և Խաւրացոց կ'ընծայէ  
 այս գիտս : Կենդանիներով հմայող տեսակ  
 մի է Օձակոչն, բայց մեր ազգի մէջ այս-  
 պիսին չի յիշուիր, այլ բառն՝ ի Ղազարայ  
 Փարպեցոյ :

Բ. Այլ և այլ նիւթոց կամ իրաց զնու-  
 թիւնք՝ իրենց անուամբ հմայութիւն ըսուել-  
 նին յիշեցիք : Իսկ սառնց իրարմէ զանա-  
 զանելով բաներ հետեւցընելն՝ Խորհչ կ'ը-  
 սուի մեր լեզուով, ուսկից եղածն այլ Խորհչք,  
 և տեսակն այլ այսոր հետ կցած. ինչպէս  
 կ'ըսուի Խորհոյհիմայ, զէմքը զննելով հմայել,  
 կամ անձին բնութեան և բարուց վրայ յար-  
 մար անյարմար բաներ ըսել, որք և երկար-  
 օրէն գրուած գտուին հայերէն այլ. ուրիշ  
 տեսակ բաներու խորոզն՝ կոչուած է նաև  
 Խորհոյհիւր : Ըսածէն յայտնուի որ խորու-  
 թիւնն ուրիշ բան չէ՝ հապա մասն այլեայլ  
 հմայութեանց, որոց շատ տեսակները յիշէ  
 վերոյգրեալ Ալակայ որդին Դաւիթ վ. « ի  
 » ծննդեան (տղայոց) բազում հմայութիւնս  
 » առնեն. բազում և յորժամ զվեռեալն հա-  
 » նեն ի տանեւ. նա և ի հարստեանս. բա-  
 » զում հմայք և ի ձանապարհի. և յորժամ  
 » առաջի առագաց երբայցեն. — և ի Հնձանս  
 » և ի Կարասի, ի վանառև, և ի գնել, և  
 » զՀանդերձու ի կորիչն, ի Զննոչ, յիշուա-  
 » յարտորիւն. ի հանելոյ յամանէն. ի վերայ  
 » Որսոց. ի Նարոտաներկոչիւնս, յՄատայ-  
 » նանկոչիւնս, այլ և յամենայն օրինակ ա-  
 » բուստից, Եւ ի խնդրել ումեք ջուր ի գի-  
 » շերի՝ անցուցեալ ընդ նա դանակ երեքքեռե-  
 » աի, և այնպէս տան ըմպել : Այլ և արգելուն  
 » ընդ երեկս տալ մաղ՝ խնդրոցաց՝ և կրակի.  
 » նոյնպէս և յառուս Անդեացն հինգ՝ տալ  
 » բան խնդրոցաց : Եւ ի գալ Նորոյ տարւոյն՝  
 » զնկնեռան երկար ի կոժ, և քարշեն ծիր  
 » զերդընակոյն (տան չորս դին). և յառաւօ-  
 » սուն յղեն զաղկուհուն՝ շրջել քարիւն ի  
 » բացեայ, և հայել ի ներքոյ նորս. թէ զը-  
 » տանի մազ սպիտակ՝ ասեն ; թէ քախտի

» հասաւ, հարմանցուցանեն զնա առն ալե-  
 » ւորի. և թէ գտանիցեն սեաւ, ասեն՝ թէ  
 » բախտի հասաւ տալ զօրիորդն երիտասար-  
 » զի: ... Եւ ամենայն արուեստաւորք ի մուսս  
 » տարւոյն յարուեստն իւր հմային. զարբին՝  
 » կռանաւ մի հարկանէ զսալ. ոստայնանկն՝  
 » թել մի քարէ ի կկոցէ, և բիճան երիցս  
 » հարկանէ. Մանոցն՝ թել մի ձգէ, և տալ  
 » զայլն զիկաւ: — Նա և ի տարեկան  
 » առն և յեկեղեցական նուէրս՝ խառնեն  
 » բազում հմայութիւնս: Այլ և ի հարկանել  
 » ժամահարիճ՝ զժամանակն հմայեն: Եւ ի  
 » յեւանեղն իւրեանց կամ օտարաց ընդ դռրս  
 » տանն՝ հմայեն: — Այլ և ի շուակալ  
 » զհանդերձ կամ զզլուի արանց կամ կա-  
 » նանց՝ հմայեն »:

Այս յիշուածներուն մէջ (անցողաբար ը-  
 սենց) հետաքննական է մեզ ժամահարն,  
 իբր գործի արուեստական և ճարտարութեան  
 հնար. վասն զի չեմ կարծեր ժամկոչ մարդ  
 մի՛ տախտակով կամ ուրիշ նիւթով զարնող՝  
 յեկեղեցի հրաւիրելու համար, այլ զարնող  
 կամ հնչող արուեստագործ ժամացոյց: —  
 Ժամանակի և ժամանակաչափ Լուսաւորաց  
 այլ հմայութիւնք կային. ինչպէս, « Լուս-  
 նահմայ. և որ զօրն շար և բարի առէ Լուս-  
 » նոփ », ըստ Վարդանայ: Աղթարաց զբոց  
 մէջ այլ կան երկար բանք ըստ փոփոխմանց  
 Լուսնոյ: — Ամպակահայք այլ նշանակութիւն ի  
 տումար. զոր օրինակ, « Սեպտեմբերի 16.

» այսօր յԱմպն հայեյ՝ առողջութիւն է մար-  
 » զոյ »: Կ'ըսուին նա և Օրահմայք, կամ  
 շարթուն օրերէն չորեքշաբթին և շաբաթն  
 շար համարիլ, ինչպէս իմացընէ Մանգակու-  
 նին, թէ և հիմայ ուրբաթն այնպէս համա-  
 բուի. կերպ մի խորանք կամ օրահմայութիւն  
 է և Ծննդաբաշխառքիսն, որ՝ էր տղայոց  
 ծննդեան աւուր կենդանակերպէն և աստե-  
 ղաց զիրքէն զուշակիլ, թէ ծնածն այս կամ  
 այն օր՝ ինչ բաղդ պիտի ունենայ. և այս-  
 պէս իբրեւ առաջուց կու բաժնէին մարդկան  
 իրենց վիճակը. այսօր համար այս կերպ խը-  
 տրութիւնք կոչուէին Բաշխք. որոց շատ հե-  
 տամուտ եղած կ'երեւին Հայք, և իրենց մն-  
 գերն ու քուրմերն շատ բան զբաժ այսպիսի  
 սնտեաց, զորս Բարդաժան Ասորի գտեր և

կարգացեր էր անոնց մեհենից մէջ: Խտրու-  
 թեան գործ մ'այլ է ամսոց այս ինչ և այն  
 օրը՝ այս և այն բաները սահմանել ընելու.  
 զոր օրինակ, նաասարդի 21 ին (օգոստ. 31)  
 յարմարի Ալիսայ խել: Օղբերուութից ձեւերուն  
 և ձայներուն այլ մանրամասն հմայութիւնք  
 գրուած կան, որոց հեղինակ Պանիէլ մար-  
 գարէն գրեն անիմաստք, աւելի զգոյշքն՝ ու-  
 բիշ Պանիէլ մի, « յԱսորոց զբոց ասացեալ », և  
 ի թարգմանեալ հայերէնս:

Այս կերպ գիտելով գտարերս կամ զգի-  
 պուածական դիրս և շարժուածս՝ հմայողքն  
 են կամ պէտք է համարուին Նշանագետ  
 կամ Նշանադետ կոչուածքն, կամ սոսկ Փետ  
 (գիտուն), և ըստ իրենց հանած հետեւու-  
 թեանէ կամ խօսքէն՝ Գոռչակ, որոյ իմաստն  
 յայտնի է: Բայց մեր մեկնողաց ո՞նէ կամ  
 ոմանք՝ Նշանագետը համարին Մեռչակահար-  
 ցոսկ. կամ Մեռչակահմայ (բայց այս ետքի  
 բառն չեմ հանդիպած ի գիրս). « Նշանա-  
 » ղէտ (է կ'ըսէ մէկն) որ մեռելովք նշանա-  
 » ւոր առնէ ». միտ ո՞նէ. « Նշանագետն որ ի  
 » գերեզմանս ննջէ և մարդ կերպարանէ, որ-  
 » պէս զՍամուէլ՝ Սաւուղայ երեւցոյց Հար-  
 » ցոսկ կ'ինն »: Այս կերպ հմայողն պէտպէս  
 խաբէական գործերով և խօսքերով կարծեցը-  
 նէր, թէ մէկուն ուզած մեռեալը կու կանչէ,  
 խօսի և հարցընէ ուզած բանին վրայօք. և  
 եթէ շատ ճարտար է մեռելահարցուկն՝ զմե-  
 ռեալն այլ կու ցուցընէ, կամ ստուերակերպ  
 բան մի տեսնել կարծեցընէ, որ Որոշական  
 կոչուի առ մեզ սովորաբար. և զի ինչորոգքն  
 այնպիսի առթից մէջ վախով այլ պաշարուած  
 են՝ իբրք չտեսածնին այլ տեսնել կարծեն և  
 հաւատան: Այսպիսի բան էր վերը յիշուած  
 Սաւուղի ուզածն այլ՝ Հարցոսկ կ'իկան ձեռ-  
 քով. թէ և ըստ մեկնչաց Ս. Վրոց՝ անոնց  
 ստութեամբ և մոլորութեամբ ուզածը, Աս-  
 տուած՝ ի յանդիմանութիւն Սաւուղի՝ ստուգիւ  
 երեւցուց կամ շեցուց Սամուէլի ահաւոր և  
 մահալճիտ ձայնը:

Փաշով այս անգամ և շար հմայողաց տե-  
 սակին՝ որ Հարցոսկք բուժեցան, շատ հեղ  
 զատանայ իրենց յօգնութեան կանչելու կամ  
 այնպէս կարծեցընելուն համար՝ կ'ըսուին և  
 Դիակոյզ. այլ և վհռնկ, որ սովորաբար՝ կա-

նանց համար կ'ըսուի. և բառն կըրնար կարծուիլ ի վեհ բառէ, իբր դիցազանց ոգւոց վերաբերեալ. բայց հաւանադոյն է վիճ բառէն, որ խոր տեղ և անդունդ նշանակէ, ինչպէս մեռեալքն և թաղեալքն այլ այնպիսի տեղոյ պատշաճին: Վերոյիշեալ վկայութեանց գրող մէկն՝ գրէ և զայս. « Վհուկքն՝ որ ի » վրհաց և յանդընդոց մեռեալ կերպարանեն, » զեւթ՝ ի կերպ մարդոյն երեւին, զոր Դի- » ահոյլ ասեն և Հագիւնար<sup>1</sup>. միւսն այլ գրէ. » Վհուկն՝ որ յանդընդոց մեռեալս հանէ, որ- » պէս առ Սաւուլ՝ կինն Վհուկ, որ էր զեւ: » Հին բառգիրք գրեն, « Վհուկ՝ որ մեռելոյ սու- » կերբ հարցանէ կամ Դեռ հարցոյն ». իսկ Սկեռացին (Գէորգ ի Մեկն. Եսայեայ) համարի « Դեռ իմն չար՝ որ յորովայնէ կա- » նանցն խօսի, և նոր իբօքն ջանայ հաւա- » նելի առնել զմոլութիւնն »: Ըստ այսմ Վհուկ և Ռրովայնախօս նոյն են. ի Ս. Գիրս այլ այս բառս գրած են իրենց լեզուով մեր վրձ- կի տեղ. (Έργαστρομυδοσ. Ventriiloquus). Վհուկ բառն գրուի և Վոհուկ, զործն՝ վրհ- կոչքիւն, հարցընդոն՝ վիկահարցոն. թերեւ իրենց կանչած ոգւոց պէս՝ այս շարանիկ հարցուիք այլ՝ վհանման տեղուանք բնա- կէին: — Եթէ պատմութիւնն ստոյգ ըլլար՝ շատ հին համարելի է վհուկութիւնն ի Հայս և առ մերձաւորս. զի Շամիրամ՝ այսպիսի իմն հնարքով, կ'ըսեն, կ'ուզէր զԱրայ տեսնալ կամ տեսած կարծեցընել. « Այն ունէր (կ'ըսէ » խորենացի) դիւքոսքեամբ վհուկութեան խրոյ » կենդանացուցանել զԱրայ »: — Գրիգոր Մագիստրոս (Թուղթ ԺԶ.) մեզապէս զորպիսի Աշոտայ (հաւանորէն Բ Գապիկ, վերջին թա- գաւոր բագրատունի), զի « ստիպարն հնարի » զիւթութեամբ կիւսոյ, և վհուկս ընդ ինքն » խորհրդածուս յուս իւր բառնայ, սասնձնեալ » որպէս կենսառեստ Պիւտիթեայն »: Մա- գիստրոսի խօսքերն այլ շատ հեղ իմանալու համար՝ սեսակ մի հարցուիկ պէտք զզացուի- և չեմք իշխեր այնքան նանրհաւաստ կարծել զԳապիկ, զոր այլք՝ Յունաց գիտուն եկեղե- ցականաց հետ աստուածաբանորէն վիճող ցու-

ցած են: Ըստ առասպելաց Յունաց՝ Պիրի- թոլս՝ կամ Պիւտիթոս ըստ Մագիստ. (Piri- thous) թագաւոր Հեպիդեայց, իր հարսա- նեաց հրաւիրեր էր զԿենդաւորոսս (Չիա- մարզս), որք հարսը յափշտակեցին, իրենք այլ յետոյ շարդուեցան. խորենացի ասոնց նմանցընէ Տրդատ բագրատունոյ ըրածը (Բ. ԿԳ), իսկ Մագիստրոս կիսս այլ մտցընէ կեն- դաւորոսից հետ. — Վհուկ անունն և զործն՝ եթէ ի մեր լեզուէ ծագեալ և թէ ոչ՝ շատ հին երեւի, ոչ այնքան հեռաւոր նմանութեամբ ձայնս երեւի և իմանալին՝ Կեղտաց և այժմու Փանս- կաց Fee կոչածին, այլ անշի Ficca որ իսկպպէս վհուկ, կախարդ նշանակէր<sup>(2)</sup>:

Մենք այլ բանն ի բան, անունն անուն անցնելով, (թէ և ըսինք որ չեմք կրնար զասոնք որոշակի զանազանել), Կիսս՝ յորմէ և Կիսասնուց, բառին ծագումը և բուն նը- շանակութիւնը չեմք գիտեր, բայց ի թարգ- մանութեան գրոց՝ Նշանադէտի իմաստով յարմարի. ինչպէս ի մարգարէութեան Չաբա- րիայ, (Գ, 8) Կիւսահմայն՝ յունարէնն Τερα- τοσχοτος, Հըրշապէտ ստուգաբանուած է, ինչ- պէս Վարդան Վ. այլ Ելից գրոց մեկնութեան մէջ գրէ. « Կիւսահմայն նշանախնդիրք և հրա- շաղէտք են »: Մագիստրոս նման իմաստով բառից հետ խառնէ Կիւսակերտող բառ մ'այլ, որ կրնայ կարծուիլ կիւսի հնարած կախարդա- կան բան մի, ինչպէս զրուածք կամ հնայեակ: Հայերէն բառս նման կամ մօտ՝ լուի առ Յոյնս կոոս կամ կոյոս, յորմէ լատինն Koes, Koies, որ Սամոթրակեան կղզեաց զից պաշ- տօնեայք էին, քսաիւք կամ խոստովանու- թեամբ մարքիւք իրենց հետեւողաց: Երկրիս շատ հեռաւոր մէկ կողմի՝ (Ամերիկայ Վեր- գինիայ նահանգի) հին քնակիւք այլ գրեթէ համանուն շատուած մի ունէին՝ Կիւսասս, Kivosa, խնամող և խորհրդատու:

(Շարայարեւի)

3. Աս մերձաւոր նմանութիւնդ յիշեցընէ և գուցէ արժէ գիտելու իրենց Eostra և մեր Աստ- դիկն. Wih, Wiha, վեհ, սուրբ, սաճար, Weiba քահանայապետ (ըստ Գոթաց), Sifer Սուրբ, Hea, Heag. Հակայ (Հայկ) Hol-Ս. Sand-Չահ- Թողով ուրիշ հասարակ բառեր.

1. Հագիւմեր՝ արարերէն աստուծոյ նշանակէ շարիք, վիշաք: